# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «ՀԾ-ՀԱՇՎԱՊԱՀ 7» համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2021 թվականի մարտի 22-ին կնքված N «ԴԴ-ՄԱԾՁԲ-21/06» պայմանագրում 2021 թվականի մայիսի 27-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝**

Պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալի ավելացման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն՝**

1. Պայմանագրի 4.1 կետում «1 995 000 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինվել են «2 020 000 (երկու միլիոն քսան հազար) ՀՀ դրամ» բառերով:
2. Պայմանագրի 4.1.1 կետում «1 995 000 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինվել են «2 020 000 (երկու միլիոն քսան հազար) ՀՀ դրամ» բառերով:
3. Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ում «ՑԱՆԿ»-ի 1-ին սյան 1-ին տողում կատարվել է լրացում:
4. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

**Փոփոխության հիմնավորում՝**

Պայմանագրի 7.5 կետ, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետ:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՀԾ-ՀԱՇՎԱՊԱՀ 7» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ 22.03.2021թ. ԿՆՔՎԱԾ N «ԴԴ-ՄԱԾՁԲ-21/06» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» «05» 2021թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայկական Ծրագրեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Սարգսյանի (այսուհետ՝ Կատարող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 22.03.2021թ. կնքված N «ԴԴ-ՄԱԾՁԲ-21/06» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 4.1 կետում «1 995 000 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «2 020 000 (երկու միլիոն քսան հազար) ՀՀ դրամ» բառերով:

1.2 Պայմանագրի 4.1.1 կետում «1 995 000 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «2 020 000 (երկու միլիոն քսան հազար) ՀՀ դրամ» բառերով:

1.3 Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ում «ՑԱՆԿ»-ի 1-ին սյան 1-ին տողը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. ««ՀԾ-Հաշվապահ 7» համակարգի թվով մեկ կրիչի փոխարինում կամ վերանորոգում»:

1.4 Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի Հավելված N 1 հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| *Դատական դեպարտամենտ* | *«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ* |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17 | Հասցե՝ ք. Երևան, Չարենցի 1 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 00807555 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 2500010002240100 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արմսվիֆթբանկ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Գ. Սարգսյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
« 24 » « 05 » 2021թ. կնքված N 1 համաձայնագրի
*(Հավելված N 2*
*« 22 » մարտի 2021 թ. կնքված «ԴԴ-ՄԱԾՁԲ-21/06» ծածկագրով պայմանագրի)*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| | | Ծառայության | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | |
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 72261160/2 | «ՀԾ-Հաշվապահ 7» համակարգի սպասարկման ծառայություններ | 1 995 000 | 1 995 000 | 1 995 000 | 2 020 000 | 2 020 000 | 2 020 000 | 2 020 000 | 2 020 000 | 2 020 000 | 2 020 000 | 2 020 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
*Դատական դեպարտամենտ*
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Ղեկավար՝ Կ. Փոլադյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
*«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ*
Հասցե՝ ք. Երևան, Չարենցի 1
ՀՎՀՀ՝ 00807555
Հ/Հ՝ 2500010002240100
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Տնօրեն՝ Գ. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ